ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայն. Բյուրեղավան
Վազգեն Ա.Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 07

17 մայիսի 2024 թվական

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԹԻՎ 07 ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին համայնքի ավագանու 8 (ութ) անդամները: Բացակայում էին համայնքի ավագանու անդամներ Վլադիմիր Վարդևանյանը, Ավագ Սահակյանը, Արշալույս Վարդանյանը, Աշխեն Մարուքյանը, Արմեն Սարգսյանը, Վալենտինա Կաղիյանը և Սոս Չիլինգարյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը:

Նիստն արձանագրում էր համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Լիլիթ Ավուշյանը:

Նիստին ներկա էին Բյուրեղավան համայնքի Ջրաբեր և Նուռնուս բնակավայրերի վարչական ղեկավարներ Բորիկ Դավթյանը և Աղվան Հարությունյանը, համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Լիդիա Պողոսյանը, աշխատակազմի առաջատար մասնագետ Աննա Սահրատյանը և քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջատար մասնագետ Աշոտ Պողոսյանը:

Մինչև նիստի օրակարգին անցնելը համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը հայտարարեց, որ ավագանու տասնհինգ անդամներից նիստին ներկա են 8-ը, նիստն իրավազոր է և առաջարկեց սկսել նիստը:

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 17-Ի ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԹԻՎ 07 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի՝ ***ավագանին որոշում է.***

Հաստատել Բյուրեղավան համայնքի ավագանու 2024 թվականի մայիսի 17-ի չորրորդ նստաշրջանի արտահերթ թիվ 07 նիստի հետևյալ օրակարգը՝

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2024 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման ընթացքի մասին:

2.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով գումար հատկացնելու մասին:

3.«Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությանը անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով գույք ամրացնելու մասին:

4.Բյուրեղավանի համայնքային «Բարեկարգում և կանաչապատում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով գույք ամրացնելու մասին:

5.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 19-ի N 84-Ա որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին:

6.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 19-ի N 85-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

7.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 12-ի N 87-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

8.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասն աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գինը հաստատելու մասին:

9.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ - 8 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է. /որոշում N 25-Ա/

Ներկայացվեցին որոշումների նախագծերը:

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԴԻԱ ՊՈՂՈՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետերի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35–րդ հոդվածի 1-ին մասի՝ ***ավագանին որոշում է.***

1.Ի գիտություն ընդունել Բյուրեղավան համայնքի ղեկավարի հաղորդումը 2024 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման ընթացքի մասին՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ - 8 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է. /որոշում N 26-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԴԻԱ ՊՈՂՈՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի, 11-րդ հոդվածի, 13-րդ հոդվածի 10-րդ մասի և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***ավագանին որոշում է***.

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2024 թվականի բյուջեում հատկացնել 5 000 000 (հինգ միլիոն) դրամ գումար՝ 2024 թվականի ընթացքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով:

2. Մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման համար սահմանվում են բոլոր ոլորտներն ու Բյուրեղավան համայնքի բնակավայրերը:

3.Մասնակցային բյուջետավորման գործընթացի ժամանակ առաջարկներ ներկայացնելու իրավասություն ունեն համայնքի բնակիչները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում պաշտոնապես գործող քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (հասարակական կազմակերպություններ, արհեստակցական միություններ, մասնագիտական ասոցիացիաներ, մեդիա խմբեր, հիմնադրամներ և քաղաքացիների այլ խմբեր):

4. Համայնքի ղեկավարին՝

1) սույն որոշման 1-ին կետում սահմանված գործընթացը՝ որպես ծրագրային բաղադրիչ, ներառել համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանում և բյուջեում, 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրում.

2)համայնքի բնակիչների կողմից քվեարկության արդյունքում ընտրված առաջարկը(ները) ներկայացնել ավագանու հավանությանը.

3)իրականացնել վերահսկողություն մասնակցային բյուջետավորման գործընթացի նկատմամբ:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ - 8 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է. /որոշում N 27-Ա/

<u>Լսեցին</u>

«ԱՆԴՐԱՆԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԵՎ ԱՆԺԱՄԿԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԴԻԱ ՊՈՂՈՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***ավագանին որոշում է.***

1.«Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությանը անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով ամրացնել համայնքային սեփականություն հանդիսացող բժշկական սարքավորումներ՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշման 1-ին կետում նշված բժշկական սարքավորումների պահպանման և սպասարկման ծառայությունների իրականացումը հանձնարարել «Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությանը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ - 8 Դեմ - 0 Ձեռնպահ – 0

Որոշումն ընդունված է. /որոշում N 28-Ա/

<u>Լսեցին</u>

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ «ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԵՎ ԱՆԺԱՄԿԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԴԻԱ ՊՈՂՈՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, *ավագանին որոշում է.*

1.Բյուրեղավանի համայնքային «Բարեկարգում և կանաչապատում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով ամրացնել համայնքային սեփականություն հանդիսացող գույք՝ 130 հատ թափոնների աղբի տարաներ (աղբամաններ), հաշվեկշռային արժեքը՝ 9 653 430 դրամ:

2.Սույն որոշման 1-ին կետում նշված գույքի պահպանման և սպասարկման ծառայությունների իրականացումը հանձնարարել Բյուրեղավանի համայնքային «Բարեկարգում և կանաչապատում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ - 8 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է. /որոշում N 29-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 84-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ Զեկ. ԼԻԼԻԹ ԱՎՈՒՇՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի՝ ***ավագանին որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու մշտական գործող հանձնաժողովներ ստեղծելու, դրանց կազմը հաստատելու մասին» N 84–Ա որոշման 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունն ու լրացումը՝

1) 1-ին ենթակետի «բ» պարբերության «Աննա Մկրտչյան» բառերը փոխարինել «Արգամ Շառյան» բառերով.

2) 1-ին ենթակետի «դ» պարբերությունը հանել.

3) 3-րդ ենթակետը լրացնել նոր «ե» պարբերությամբ.

«ե. Արգամ Շառյան»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ - 8 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է. /որոշում N 30-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 85-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ Զեկ. ԼԻԼԻԹ ԱՎՈՒՇՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի՝ ***ավագանին որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 19-ի «Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմերի և Բյուրեղավան համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 23-ի N 09-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 85-Ա որոշման 2-րդ կետում «Էդիկ Պիճիկյանին, Աննա Մկրտչյանին» բառերը փոխարինել «Կարապետ Հարությունյանին, Արգամ Շառյանին» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ - 8 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է. /որոշում N 31-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 87-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ Զեկ. ԱՆՆԱ ՍԱՀՐԱՏՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի՝ **ավագանին որոշում է.**

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքում սոցիալապես անապահով և կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, խոցելի ընտանիքներին սոցիալական ծառայությունների տրամադրման, սոցիալական աջակցության ծառայությունների բարելավման գործընթացն ապահովող մշտական հանձնաժողով ստեղծելու և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 25-ի N 68-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 87–Ա որոշման 1-ին կետից հանել «Աննա Մկրտչյան - համայնքի ավագանու անդամ,» և «Արևիկ Գաբրիելյան - Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ - 8 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է. /որոշում N 32-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ Զեկ. ԱՇՈՏ ՊՈՂՈՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 3-րդ մասի և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***ավագանին որոշում է.***

1.Համաձայնություն տալ Բյուրեղավան համայնքի ղեկավարի առաջարկությանը աճուրդային (դասական աճուրդ) կարգով Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 51/5 հասցեի 0.5 հեկտար մակերեսով (վկայական՝ N 19042024-07-0117, կադաստրային ծածկագիրը՝ 07-003-0011-0118) արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողամասն օտարելու համար:

2.Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի մեկնարկային գինը՝ համաձայն հավելվածի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ - 8 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է. /որոշում N 33-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԼԻԹ ԱՎՈՒՇՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ***ավագանին որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու

չորրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2024 թվականի մայիսի 31-ը, ժամը՝ 10:00-ն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ - 8 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է. /որոշում N 34-Ա/

Օրակարգի հարցերը սպառվեցին:

Ավագանու նիստն ավարտվեց:

Ավագանու անդամներ՝

ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ _____

ԴԱՆԻԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ _____

ԱՐՓԻՆԵ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ _____

ԷԴԻԿ ՊԻՃԻԿՅԱՆ _____

ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ _____

ԿԱՐԱՊԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

ԱՐԳԱՄ ՇԱՌՅԱՆ _____

ՎԱՐԴԱՆ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ